

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԻՐՅԱԼՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՈՂ (Ծննդյան 90-ամյակի առիթով)

Գիտամշակութային մեծ նվաճումներով աշխարհին հայտնի մեր ժողովուրդը աչքի է ընկել վառ անհատականություններով ու նվիրյալներով, որոնք անմնացորդ ծառայել ու ծառայում են իրենց հայրենի երկրին ու ժողովրդին: Այդ մարդկանց համար հաստատուն ու հանրագուտ նկարագիր ունենալը գոյատևումի երանելի իմաստ է: Նման բարձր հատկանիշներով էր օժտված կատարյալ հայրենասեր, հայի ու քաղաքացու տիպար, հասարակական-քաղաքական և ազգային գործիչ, գիտակրթական համակարգի տաղանդավոր կազմակերպիչ, լավագույն մտավորական, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանը: Նրա ապրած կյանքի 87 տարիները դեռ երկար են զգացնել տալու բեղմնավոր վաստակի արգասիքը:

Նա ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 8-ին Գորիսում: Քաղաքի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և գերազանց առաջադիմությամբ ավարտել 1952 թվականին: Աշխատանքային մկրտությունն ստացել է հարազատ շրջանում գործուղվելով ծննդավայր՝ որպես շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: Հաջորդ տարվանից նա աշխատանքի է անցել ՀԿԿ Գորիսի շրջկոմում, նախ որպես հրահանգիչ, ապա բաժնի վարիչ: 1957 թ. ընտրվում է նույն շրջկոմի գաղափարական գծով քարտուղար: 1959 թ. Հ. Սիմոնյանը մեկնում է Մոսկվա և ընդունվում ԽՄԿԿ կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիա: Ավարտելուց հետո (1962 թ.) պաշտպանում է թեկնածուական թեզ և հրատարակում որպես առաջին գիտական աշխատություն: Գալով Երևան՝ նա աշխատանքի է անցնում Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում (1962-1990 թթ.) սկզբում որպես ավագ գիտաշխատող, իսկ 1977-90 թթ.՝ որպես տնօրեն: 1966-77 թթ. միաժամանակ աշխատել է ՀԿԿ կենտկոմում՝ դասախոսական խմբի ղեկավարի, ապա բաժնի վարիչի առաջին տեղակալի պաշտոններում, եղել է վարիչի պաշտոնակատար: 1977-1990 թթ. նա գլխավորել է նշված ինստիտուտի կոլեկտիվի աշխատանքը: 1990-1991 թթ. վարել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, իսկ 1991-1994 թթ. եղել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ:

1994-2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական՝ 1999-2003 թթ. միաժամանակ ղեկավարելով Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը: Տարբեր ժամանակներում Հ. Սիմոնյան եղել է շրջանային և քաղաքային խորհուրդների, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀԿԿ կենտկոմի անդամ: Նա հասարակական ակտիվ աշխատանքներ է կատարել լինելով բազմաթիվ գիտական խորհուրդների, գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների կազմում, հանդիսացել է Հայաստանի ժողովրդական համալսարանների հանրապետական խորհրդի, Հայաստանի մտավորականության խորհրդի նախագահ և այլն: Իր ուսուցիչ Աշոտ Հովհաննիսյանի նման նա էլ հանրապետական և համամիութենական գիտական պարբերականներում հրատարակել է պատմական բնույթի բազմաթիվ գիտական հոդվածներ: Շնորհիվ բնատուր ծիրքի, լայնախոհության, ինքնուրույն մտածելակերպի, գիտական ճշմարտությանը հասու լինելու համառության, վերլուծական մտածողության ու աշխատասիրության՝ ակադեմիկոս Հ. Սիմոնյանն անգնահատելի դեր է խաղացել հարազատ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի շատ հիմնահարցեր խորությամբ ուսումնասիրելու գործում: Հ. Սիմոնյանը հեղինակ է ավելի քան 40 մենագրության և շուրջ 400 գիտական հոդվածների:

1960-ական թթ. Հ. Սիմոնյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը հայկական սփյուռքն էր, հատկապես այնտեղ գործող հայ քաղաքական ուժերը, նրանց գործունեությունը, փոխհարաբերությունները, Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը: 1968 թ. հրատարակվում է նրա «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» գիրքը: 1970-ական թթ. սկզբներից Հ. Սիմոնյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում եղել են քաղաքական-փիլիսոփայական բնույթի հարցերը: Նա ընթերցողներին է ներկայացնում ծավալուն մենագրություններ՝ «Ինդուստրիալ հասարակության տեսությունները» (1973 թ.), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (2 հատորով, 1977 թ.), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (1982 թ.) և այլն: Այդ աշխատություններում տրվում է բուրժուական գաղափարական մի շարք ուղղությունների ծագման ու զարգացման պատմությունը, դրանց հետագա փոխակերպումների փուլերն ու սոցիալ դասակարգային էությունը: Գիտական մեծ արժեք է ներկայացնում «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» ուսումնասիրությունը (1980 թ.), որում հանգամանորեն բացահայտված են այդ գաղափարախոսության հիմնական բաղադրիչները՝ օսմանիզմ, իսլամիզմ, պանիսլամիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ: Հանգամանորեն վերլուծելով հատկապես պանթուրքիզմի էությունը (ծայրահեղ շովինիզմ և մարդատյաց ռասիզմ) հեղինակը կատարել է կարևոր եզրահանգումներ:

Գիտնականը միաժամանակ շարունակում է Հայաստանի և Անդրկովկասի կոմունիստական շարժման պատմության վերաբերյալ հանդես գալ բազմաթիվ հրապարակումներով, եղել է «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերի» (Երևան), «Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծեր» (Թիֆլիս) կոլեկտիվ աշխատությունների ստեղծողներից մեկը և ընդհանրապես այդ տարիներին համարվում էր նշված թեմատիկայի խոշոր մասնագետներից մեկն Անդրկովկասում:

1970-ականների վերջերից Հ. Սիմոնյանի գիտական ուսումնասիրությունների միակ բնագավառը դառնում է հայագիտությունը: 1991 թ. լույս է տեսնում նրա «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» մենագրությունը: Մի շարք հրապարակումներից հետո երկու ստվարածավալ գրքերով ընթերցողի սեղանին է դրվում «Անդրանիկի ժամանակը» մեծարժեք աշխատությունը (1996 թ.)՝ գրված հայ ազգային-ազատագրական շարժման լայն համայնապատկերի վրա: Մենագրությունում առաջին անգամ շրջանառվում են հարյուրավոր նորահայտ արխիվային փաստաթղթեր և նյութեր: Աշխատությունը միանգամայն նոր խոսք է ազգային հերոսի կյանքի ու մարտական անցած ուղու մասին: Շարունակելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության խորքային պեղումները՝ Հ. Սիմոնյանը ստեղծում է «Ազատագրական պայքարի ուղիներում» հնգահատոր աշխատությունը (առաջին 2 հատորները լույս են տեսել 2003 թ., մյուս 2-ը՝ 2009 և 2010 թթ., հինգերորդը՝ 2013 թ.): Ժամանակաշրջանի համաշխարհային իրադարձությունների լույսի ներքո այդ հատորներում բացահայտված են 1905-1914 թթ. հայոց պատմության նորանոր շերտեր: Հազարից ավելի էջեր ընդգրկող յուրաքանչյուր հատորում օգտագործված են բազմաթիվ աղբյուրներ՝ ՀՀ Ազգային արխիվի, Մատենադարանի, ազգային գործիչների անձնական արխիվների բազմաթիվ նյութեր, ժամանակի մամուլում զետեղված փաստեր, որոնց մեծ մասն առաջին անգամ է շրջանառության մեջ դրվում: Հ. Սիմոնյանը վերլուծել և համակողմանիորեն քննության է առել XX դարասկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում Արևելյան և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները և կատարել արժեքավոր եզրահանգումներ: Արժևորելով ականավոր գիտնականի մեծածավալ հինգ հատորյակը՝ անհրաժեշտ է նշել, որ բոլոր հատորներն էլ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, գիտական խորաթափանցությամբ, փաստական հարուստ նյութերի բազմակողմանի վերլուծությամբ, եզրակացությունների տրամաբանությամբ ու գիտական նորոյթով: Աշխատանքը կատարվել է հեղինակին բնորոշ բարեխղճությամբ ու գիտական բարձր պատասխանատվությամբ:

Պատմական փաստերի վերլուծության հիման վրա կատարված ինքնուրույն դատողությունները, անհրաժեշտ եզրակացություններն ու առաջարկները խիստ արդիական են, ունեն քաղաքական կարևոր նշանակություն՝ հատկապես պատմությունից դասեր քաղելու առումով: Աշխատանքն արժանացավ ՀՀ պետական մրցանակի:

Դեռևս 2009 թ. ապրիլին, երբ լրանում էր Կիլիկիայի հայերի ջարդերի 100-ամյակը, այդ առիթով լույս տեսավ գիտնականի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում 1909 թ. ապրիլ» արժեքավոր ծավալուն մենագրությունը, որն իր վրա բևեռեց պատմաբանների և առիասարակ ընթերցող հասարակայնության ուշադրությունը: Այն անգլերենով թարգմանվել և հրատարակվել է Մեծ Բրիտանիայում: 2014 թ. հրատարակվեց Հ. Սիմոնյանի «1912-1913 թթ. բալկանյան պատերազմները և հայերը» սովորածավալ աշխատությունը, որտեղ ժամանակի հայկական մամուլի հրապարակումների, Հայաստանի, Ռուսաստանի և Բուլղարիայի արխիվներում պահպանված փաստաթղթերի և նյութերի հիման վրա, ի մասնավորի, ներկայացված և վերլուծված է հայերի մասնակցությունը պատերազմական իրադարձություններին:

Արդարև, նշանավոր գիտնականի կետարյա վաստակը ծանրակշիռ է և ուսանելի: 1970 թ. Հ. Սիմոնյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ մեկ տարի անց ստացել պրոֆեսորի կոչում: Գիտության մեջ ներդրած ավանդի համար 1986 թ. նա ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ: Հայ ժողովրդի նորագույն ազգային-ազատագրական շրջանի պայքարի առաջին իսկ օրերից Հ. Սիմոնյանը արցախյան համաժողովրդական շարժման բովում էր: Քաջատեղյակ լինելով Կովկասյան Հայաստանը բաժան-բաժան անելու պատմությանը՝ նա իր գրչով ճշմարտությունը հաղորդում էր ժողովրդին: Չեն մոռացվել այդ տարիների նրա տասնյակ հոդվածներն ու հրապարակային ելույթները, որոնք խանդավառում էին մարդկանց: Լինելով ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր՝ նա հեղինակել և քննարկման է ներկայացրել որոշումների բազմաթիվ նախագծեր: Լինելով անկախության պայքարի ակունքներում՝ նշանավոր գիտնականն իր ակտիվ մասնակցությամբ որոշակի նպաստ բերեց Հայաստանի երրորդ հանրապետության հռչակման ու կայացման գործընթացին: Այդ տարիների պատմության շատ վավերագրեր ու նյութեր, որոնք արտացոլում են քաղաքական գործչի ու գիտնականի գործունեությունը, պահպանվում են ՀՀ Ազգային արխիվում (տե՛ս «Հ. Սիմոնյանի ֆոնդ»):

1964 թվականից Հ. Սիմոնյանը դասավանդել է ԵՊՀ պատմության և փիլիսոփայության ֆակուլտետներում, հանրապետության այլ բուհերում, գիտական զեկուցումներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլուր՝ ըստ արժանվույն ներկայացնելով հայրենի գիտության նվաճումները: Նրա գրվածքներից մի քանիսը լույս են տեսել Չեխոսլովակիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Իրանում: Անկախությունից հետո մարքսիստական գաղափարախոսության քննադատությունը կամ մերժումը հասարակական գիտությունների ասպարեզում դժվարին կացություն ստեղծեց հատկապես պատմագիտության համար: Նոր և նորագույն պատմության շատ հարցեր պետք է միանգամայն նոր լուսաբանություն և մեկնաբանություն ստանային: Պահանջ առաջացավ շատ հիմնախնդիրներ լուսաբանել հանրամատչելի, բայց նորովի մոտեցումներով: Անհետաձգելի խնդիր էր հայոց պատմության բուհական նոր ծրագրերի ու դասագրքերի ստեղծումը, որին էլ ձեռնամուխ եղավ հայագետ պատմաբանը: Նրա անմիջական ղեկավարությամբ հայոց պատմության ամբիոնի դասախոսներից կազմված հեղինակային խումբը 2000 թ. հրատարակեց հայոց պատմության բուհական ծրագիրն ու դասագիրքը ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար: Ակադեմիկոս Հ. Սիմոնյանի խմբագրությամբ պատրաստվեց և 2012 թ. հրատարակվեց հայոց պատմության բուհական դասագրքի լրանշակված և ամբողջացված տարբերակը, որը ռուսերեն հրատարակվեց 2014 թ.:

Տարիներ շարունակ դասավանդելով Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ Հ. Սիմոնյանն իր գիտելիքներն ու իմացությունը անմնացորդ

նվիրումով հաղորդել է ուսանողությանը՝ ղեկավարելով կուրսային և ավարտական աշխատանքներ, հոգածությամբ նպաստելով գիտական կադրերի պատրաստմանը: Նրա սաներից շատերը աշխատում են հանրապետության գիտակրթական ու մշակութային բազմաբնույթ ոլորտներում՝ հաջողությամբ ղեկավարելով հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի բազմաթիվ հանգուցային բնագավառներ: Գիտությունն իր մեջ ամբարած մտավորականին գիտական անաչառության հետ մեկտեղ բնորոշ էր ազգային շահի գիտակցումն ու պետական մտածողությունը: Այդ որակներն էին, որ, իբրև դասախոս, գիտնական ու մանկավարժ, նա ջանում էր ներարկել երիտասարդ սերնդի մեջ:

Տասնամյակներ շարունակ կատարած գիտամանկավարժական հայրենանվեր աշխատանքով ու անմնացորդ նվիրումով Հ. Սիմոնյանը մեծ հեղինակություն էր վայելում մտավորականության և ժողովրդի շրջանում: Նա երիտասարդական եռանդով ու ավյունով ծառայում էր իր հայրենիքին ու հարազատ ժողովրդին, իր կյանքի վերջին շրջանը նույնպես լի էր ստեղծագործական բեղուն գործունեությամբ: Վերջերս հրատարակվեցին նրա «Հայ հասարակական-քաղաքական միտքը և բալկանյան պատերազմները», «Անդրանիկի քաղաքական արդարացման պատմությունից» (ռուսերեն), «Հայերի դերը Իրանի սահմանադրական հեղափոխության մեջ» (պարսկերեն) աշխատությունները և անձնական հուշերի գիրքը: Ռուսաստանի Դաշնությունում շուտով կիրատարակվի Հ. Սիմոնյանի «Ռուսական կայսրությունը և հայկական հարցը Առաջին աշխարհամարտի նախօրյակին» մեծածավալ ուսումնասիրությունը: Ցավոք, կիսատ մնացին անվանի գիտնականի՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին և պարսիկ մեծ պոետ Նիզամուն նվիրված աշխատությունները:

Ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանը բացառիկ ունակություններով օժտված անհատականություն էր: Չարմանք էր պատճառում նրա աշխատասիրությունը: Նա մտավորականի բարձր տիպար էր՝ պարզ, անկեղծ ու բարյացակամ: Նրա մարդկային վեհ ու առաքինի հատկանիշներն էին համեստությունը, անսահման բարությունը, ազնվությունն ու գործին նվիրվածությունը, որոնց շնորհիվ նա վայելում էր գործընկերների և ուսանողության սերն ու ակնածանքը: Հ. Սիմոնյանի բեղուն գործունեությունը հայագիտությանն անմնացորդ նվիրյալի դաստիարակչական փայլուն օրինակ է գիտակրթական լայն հանրույթի՝ առավելապես երիտասարդության համար:

Էդիկ Սինասյան